ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի, Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

« 19» հունվարի 2021 թվականի N 01-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածով,

***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 19-ի թիվ 1՝ հերթական նիստի

***օրակարգը.***

1. Մայակովսկի համայնքի 2020 թվականի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
2. Մայակովսկի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 53-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին
4. Համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը 2021 թվականի համար սահմանելու մասին
5. Մայակովսկի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 9 ի N 48-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
6. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով օտարելու մասին

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ ՎՈԼՈԴԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ ԳԵՂԱՄԻ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ ՌԱԶՄԻԿԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԼԵՏԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ ՎԱՆԻԿԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2021թ. հունվարի 19

Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի, Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19» հունվարի 2021 թվականի N 02-Ա

### ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N2-Ն հրամանով հաստատված կարգի ,

*համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.*

1. Հաստատել Մայակովսկի համայնքի 2020 թվականի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ ՎՈԼՈԴՅԱԻ

ԱՍՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ ԳԵՂԱՄԻ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ ՌԱԶՄԻԿԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԼԵՏԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ ՎԱՆԻԿԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2021թ. հունվարի 19
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19» հունվարի 2021 թվականի N 03-Ն

## ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1. Մայակովսկի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Մայակովսկի համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին » N 53 -Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՈՆԻԿ ՎՈԼՈԴԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ ԳԵՂԱՄԻ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ ՌԱԶՄԻԿԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԼԵՏԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ ՎԱՆԻԿԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2021թ. հունվարի 19
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի, Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19» հունվարի 2021 թվականի N 04-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով, ***համայնքի ավագանին որոշում է***.

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ ՎՈԼՈԴԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ ԳԵՂԱՄԻ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ ՌԱԶՄԻԿԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԼԵՏԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ ՎԱՆԻԿԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2021թ. հունվարի 19
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք.
գ. Մայակովսկի. Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19» հունվարի 2021 թվականի N 05-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով , ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝***

1.Սահմանել 2021 թվականի բյուջետային տարվա համայնքի կամավոր խնդիրների իրականացման համար համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների հետևյալ կարգը՝

1) համայնքում պաշտպանության կազմակերպման, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հողօգտագործման, տրանսպորտի, կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, աշխատանքի և սոցիալական ծառայության, գյուղատնտեսության բնագավառներում կամավոր լիազորություններն իրականացնել 2021 թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին՝

ա. մինչև 1 000 000 (մեկ միլիոն) դրամ ծախս պահանջող աշխատանքների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ. 1 000 000 (մեկ միլիոն) դրամից ավել ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:

2) հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման նպատակով՝

ա. մինչև 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի տրամադրումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ. 50 000 (հիսուն հազար) դրամ գումարից ավելի ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում.

3) Համայնքի ղեկավարի բջջային հեռախոսի վարձավճար 1 հեռախոսահամարների համար՝ ամսական 8000 ՀՀ դրամ:

4) Համայնքի ղեկավարին ամրակցված Toyota camry մակնիշի 001 LL 70 ծառայողական մեքենայի համար՝ ամսական 58000 ՀՀ դրամ բենզին , 80000 ՀՀ դրամ սեղմված գազ :

2. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՈՆԻԿ ՎՈԼՈԴԻԱՅԻ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ ԳԵՂԱՄԻ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ ՌԱԶՄԻԿԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԼԵՏԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ ՎԱՆԻԿԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2021թ. հունվարի 19
գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 19 » հունվարի 2021 թվականի N 06-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 48-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30 րդ հոդվածի պահանջներով,
***համայնքի ավագանին որոշում է.***

1.Մայակովսկի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 48-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի փետրվարի 1-ից:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՈՆԻԿ ՎՈԼՈԴԻ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ ԳԵՂԱՄԻ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ ՌԱԶՄԻԿԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԼԵՏԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ ՎԱՆԻԿԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2021թ. հունվարի 19
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՀՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի , հեռ. 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » հունվարի 2021 թվականի N 07-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի21-րդ կետի,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը. ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել աճուրդ վաճառքի եղանակով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը , հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն հավելվածի :

Կողմ(6) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՈՆԻԿ ՎՈԼՈԴԻ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ ԳԵՂԱՄԻ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ ՌԱԶՄԻԿԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԼԵՏԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ ՎԱՆԻԿԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2021թ. հունվարի 19
գ. Մայակովսկի